


# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



Անհատ Չեռնարկատեր (աուդիտոր)  
**ԱՇՈՏ ՄՈՎՍԵՍՅԱՆ**  
Լիցենզիա ԱՇ N: 047  
Աուդիտորի վկայական N:082

ք. Երևան, Նոր Նորքի  
8-րդ զանգված 33/27  
հեռ.(37491) 403821

N: 21 14.04.2009թ.

## «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ

### 2008թ.-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Աուդիտի է ենթարկվել «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 01.01.2009թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի (2008թ.-ի) ֆինանսական արդյունքների մասին և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները: Իրականացվել է ՀՀ Կենտրոնական բանկին ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում՝ տեխնիկական պահուստների, հիմնական տնտեսական նորմատիվների պահանջների, տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների տեղաբաշխման «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին: Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է կազմակերպության ղեկավարությունը:

Աուդիտորի պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ մեր աուդիտորի պարտականությունն է տալ կարծիք հետևյալի մասին.

- 1) Ընկերության ներքին աուդիտի գործունեության, ներքին հսկողության համակարգի՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին,
- 2) Ընկերության ներքին տեղեկատվական համակարգի առկայության կամ որակի մասին,
- 3) Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ամբողջականության և հավաստիության մասին:

Աուդիտն իր մեջ ներառում է ընտրանքային կարգով իրականացված այն փաստաթղթերի հաշվեքննումը, որոնք թույլ են տալիս գնահատել հաշվետվություններում և այլ ֆինանսական փաստաթղթերում բովանդակվող տեղեկությունների հավաստիությունը:

